ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Գ. Ս. ՇԱՀԿՅԱՆ

Պարբերացումը հայ ճարտարապետության պատմության կարևորագույն խնդիրներից է, նրա զարգացման մակարդակի անդրադարձը։ Այդ է պատճառը, որ հետազոտողները, սկսած Թորոս Թորամանյանից, հայ ճարտարապետության պատմության պարբերացմանը սվել են մեծ կարևորություն և ելակետ դարձրել իրենց գիտական եզրահանգումների ու ձևակերպումների համար։ Հայ մշակույթի երախտավոր Կարո Ղաֆադարյանը, անդրադառնալով հայ ճարտարապետության պատմությունն պարբերացման խնդրին, նկատում է. «Բնական է, որ այս հարցը միանգամից չի լուծվի, այլ անհրաժեշտ է այն քննել գիտական մամուլում և գիտաժողովներում, մինչև որ թեր ու դեմ կարծիքների հիման վրա մշակվի բոլորի կողմից ընդունելի մի տեսակետ»[1]։ Իրոք, անցած տասնամյակներում հայ ճարտարապետության պատմությունը մեծ վերընթաց է ապրել, սակայն չի կարելի ասել, թե պարբերացման հարցերը հիմնավորապես լուծված են։ Գիտական հետազոտությունները, հնագիտական պեղումները և բացահայտումները անընդհատ նորանոր նյութեր ու անակնկալներ են մատուցում ճարտարապետության պատմաբանին։ Վերանայվում, ճշգրտվում, հիմնավորվում են նաև պարբերացման հարցերը, որոնք, բնականաբար, առավել ամբողջական ձևով արտացոլվում են հայ ճարտարապետության պատմության ընդհանրական բնույթի աշխատություններում։ Սակայն հայ ճարտարապետության պատմության պարբերացման խնդրում այդ աշխատություններին հատուկ են մի շարք թերություններ՝ նախահայկական և վաղ հայկական շրջանների անբավարար ընդգրկում, միջնադարի և նրա ենթափուլերի ոչ միասնական ու հստակ ժամանակագրում, Կիլիկյան Հայաստանի և հայ գաղթօջախների ճարտարապետության բացթողում, քաղաքաշինական խնդիրների և աշխարհիկ ճարտարապետության թերի լուսաբանություն, դարաշրջանները բնորոշող միասնական գիտական անվանումների բացակայություն և այլն։ Այդ առումով առանձնանում են Վ. Հարությունյանի և Մ. Հասրաթյանի վերջին աշխատությունները[2], որոնցում հայ ճարտարապետության պատմության պարբերացման հարցերը լուծված են պատշաճ մակարդակով և հիմնականում զերծ են վերը նշված թերություններից։

Հայ ճարտարապետության պատմության կուռ պարբերացումը, առաջին հերթին, պահանջում է ժամանակագրական բաժանումների, ընդգրկման շրջանակների, դարաշրջանները բնորոշող գիտական անվանումների և այլնի միասնականություն։ Ճարտարապետական շրջափուլերը սովորաբար ներկայացվում են հասարակական կացութաձևերի անվանումներով, դարաշրջաններով, քաղաքական իշխանությունների կամ թագավորությունների ժամանակով կամ էլ ուղղակի դարերով։ Բոլոր դեպքերում նախընտրելին ճարտարապետական շրջափուլերի միասնականությունն է և համապատասխանությունը հայ ժողովրդի պատմության շրջափուլերին։

Հաշվի առնելով վերոհիշյալը, կարելի է առաջարկել հայ ճարտարապետության պատմության հետևյալ շրջանները՝

---

1 Կ. Գ. Ղաֆադարյան, *Հայ ճարտարապետության պատմության պարբերացման հարցի շուրջը (Պատմա-բանասիրական հանդես, 1971, № 3, էջ 83)։*

2 В. М. Арутюнян, Каменная летопись армянского народа, Ереван. 1985; М. М. Асратян, Очерк армянской архитектуры, М., 1985.

Ա. Հնագույն փուլը վերաբերում է Հայկական բարձրավանդակում մ. թ. ա. IV—I հազ. կատարված շինարարական գործունեությանը (քարեդարյան անձավներ, պղնձեդարյան և բրոնզեդարյան բնակատեղիներ, դամբարանադաշտեր, մեգալիթյան կառույցներ, բերդշեներ, ժայռափորագրություններ և այլն) և հիմնականում համապատասխանում է նախնադարյան-համայնական կացութաձևի դարաշրջանին։ Մինչև վերջերս, որպես հնագույն փուլի բաղկացուցիչ մաս ընդունված էր Ուրարտուի ճարտարապետությունը (մ. թ. ա. IX—VII դդ.), որը, փաստորեն, հայ ժողովրդի մի ժամանակահատվածի (Արարատյան թագավորության շրջանի) ճարտարապետությունն է։ Ինչպես նկատում են Վ. Բարխուդարյանը և Լ. Խուրշուդյանը, «Ուրարտագետները շրջադարձ կատարեցին, ավելի ճիշտ շրջադարձ են կատարում Ուրարտուի պատմությունը հայ ժողովրդի կազմավորման ընդհանուր ոլորտում քննարկելու, դրան հայագիտության տեսանկյունից դիտարկելու ուղղությամբ»[3]։ Ավելին. մասնագիտական գրականության մեջ արդեն Ուրարտու հասկացության փոխարեն սովորական են դառնում Հնագույն Հայաստան, Արարատյան թագավորություն, Վանի թագավորություն, այսպես կոչված Ուրարտու կամ պարզապես Հայաստան։

Բ. Հին փուլը ընդգրկում է արդեն կազմավորված հայկական պետականության ժամանակաշրջանի՝ ստրկատիրական կացութաձևի ճարտարապետությունը, մ. թ. ա. VI—մ. թ. III դդ.։ Աշխատությունների զգալի մասում այդ դարաշրջանը ներկայացված է մ. թ. ա. IV—մ. թ. III դդ. ժամանակահատվածով, որը չի արդարացվում, քանի որ մ. թ. ա. VII—VI դդ. վաղուց կազմավորված է եղել հնագույն հայկական պետությունը, որով և նշանավորվել է հայ ժողովրդի ձևավորման ավարտական փուլը[4]։ Մ. թ. ա. VI—V դդ. անպայման պետք է ներկայացվեն հին փուլի ժամանակագրության մեջ, ինչպես որ դրանք ներկայացված են հայ ժողովրդի պատմության, հին Հայաստանի արվեստի պատմության պարբերացման մեջ[5]։ Այդ դարերը թերևս ավելի են կարևորվում Հայկական լեռնաշխարհում բնակվող այլ ցեղերի մշակույթի և ճարտարապետության հետ հայկականի ունեցած առնչության առումով։ Մանավանդ ունենք այդ շրջանին վերաբերող այնպիսի հնավանդ սկզբնաղբյուրներ, ինչպիսիք են՝ Մ. Խորենացու «Հայոց պատմությունը», Քսենոփոնի «Անաբասիսը», «Կյուրոպեդիան» և այլն։ Ինչպես վկայվում է պատմիչների (Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ և ուրիշներ) հիշատակությամբ և հուշարձանների փաստական տվյալներով, քրիստոնեության շրջանի առաջին դարերին վերաբերող հուշարձաններից շատերը եղել են հեթանոսական մեհյաններ, տաճարներ, սակայն դրանք անբավարար չափով են ընդգրկված հայ ճարտարապետության պատմության հին շրջափուլում։

Գ. Վաղ միջնադարը՝ ֆեոդալական դարաշրջանի սկզբնական փուլը, ընդգրկում է IV—VII դդ.։ Եթե IV—V դդ. բնութագրվում են հիմնականում հայ մոնումենտալ ճարտարապետության աղգային նկարագրի որոնման և կազմավորման ճիգերով, ապա VI—VII դդ. դրա հասունության և կատարելության դրսևորման դարաշրջանն են։ Չի կարելի չբաժանել Կ. Ղաֆադարյանի տարակուսանքը. «Վերջիվերջո, ինչպե՞ս կարելի է բազիլիկ միանավ կամ եռանավ տաճարները և Զվարթնոցն ու Հռիփսիմեն միևնույն աստիճանի վրա դնել, մանավանդ որ IV—V դարերի և VII դարի սոցիալ-տնտեսական և քաղաքական

---

3 Վ. Բարխուդարյան, Լ. Խուրշուդյան, Վերակառուցում. հայ ժողովրդի պատմության մի քանի հարցեր (Խորհրդային Հայաստան, 14. VI. 1989)։

4 Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 438—439։

5 Բ. Ն. Առաքելյան, Ակնարկներ Հին Հայաստանի արվեստի պատմության, Երևան, 1971, Г. А. Тирацян, Культура Древней Армении VI в. до н. э.—III в. н. э., Ереван, 1988.

պայմանները ևս միմյանցից բոլորովին տարբեր են»[6]։ Ուստի ճիշտ կլինի վաղմիջնադարյան փուլը ևս մյուս փուլերի նման բաժանել ենթափուլերի՝ IV—V և VI—VII դդ., ինչպես այդ անում են հայ ճարտարապետության հետազոտողներից շատերը[7]։

Դ. Զարգացած միջնադարը ըստ ընդունված պարբերացման ընդգրկում է IX դ. վերջից—XIV դ.՝ IX—XI և XII—XIV դդ. ենթափուլերով։ Ինչպես երևում է, հայ ճարտարապետության պատմության պարբերացման մեջ չեն շրջանառվում VIII—IX դդ. (բացի IX դ. վերջին տասնամյակներից)՝ պայմանավորված Հայաստանում արաբական տիրապետության հետևանքով ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր կացությամբ։ Իրավացի է Կ. Ղաֆադարյանը, երբ գրում է. «որևէ դարաշրջանի ճարտարապետություն, ինչ բնույթ էլ ունենա նա, պետք է իր արտահայտությունը գտնի պատմության էջերում...»[8]։ Մ. Հասրաթյանը «Ակնարկ հայ ճարտարապետության» աշխատության մեջ, չընդհատելով հայ ճարտարապետության շղթան, ընդգրկում է նաև VIII դարը՝ ներկայացնելով այն Օձունի, Արամոսի եկեղեցիների վերականգնման, մեմորիալ կոթողների կառուցման իրողություններով[9]։ VIII—IX դդ. հայ ժողովրդի շինարարական գործունեության ուսումնասիրման արդյունքները բավարար հիմք են տալիս եզրակացնելու, որ այդ շրջանում հայ ժողովրդի ճարտարապետական-շինարարական գործունեությունը, որ մասնագիտական գրականության մեջ բնութագրվում է որպես մեռյալ վիճակ, չնայած Արաբական խալիֆայության կասեցնող և բռնադատող քաղաքականության հետևանքով երկրում ստեղծված ծանր կացությանը, չի ընդհատվել, ինչպես որ չեն ընդհատվել մշակութային, սոցիալ-տնտեսական գործունեության մյուս ոլորտները[10]։ Վաղ միջնադարը զարգացած միջնադարի հետ կապող VIII—IX դարերը շրջանառության մեջ դնելը, հայ ճարտարապետության միջնադարյան փուլի նկարագիրը ամբողջացնելուց զատ, հնարավորություն է ընձեռում լուծելու զարգացած միջնադարի ճարտարապետության բուն վերելքի, ծաղումնաբանության, ժառանգորդության դրսևորումների նախադրյալների խնդիրները, ճշգրտելու զգալի թվով հուշարձանների ժամանակագրությունը և այլն։ Հայաստանում արաբական տիրապետության շրջանը, ճարտարապետական-շինարարական առումով ներկայացված լինելով համեմատաբար աղքատիկ և չունենալով կառուցելու, ստեղծագործելու համար նպաստավոր պայմաններ, չէր կարող իր ուրույն ճարտարապետական դեմքն ունենալ։ Դրանով է բացատրվում, որ VIII—IX դդ. հուշարձանները նաև հորինվածքային առումով կազմում են վաղ միջնադարի շարունակությունը։ Եթե նկատի ունենանք, որ հայ պատմագիտության մեջ վաղ միջնադարը հասնում է մինչև IX դ., ապա տեղին և հիմնավոր կլինի VIII դ. մինչև IX դ. 80-ական թվականները (այսինքն, արաբական տիրապետության ողջ

---

6 Կ. Գ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 91։

7 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942, էջ 53, Ս. Խ. Մնացականյան, Հայկական ճարտարապետությունը VI դարի երկրորդ կեսից մինչև VII դարի վերջը (Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, Երևան, 1964, էջ 129), О. Х. Халпахчьян. Архитектура Армении (Всеобщая история архитектуры, т. 3, Л—М., 1966, с. 200); А. Л. Якобсон, Закономерности в развитии средневековой архитектуры, Л., 1985, с. 51, 57.

8 Կ. Գ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 92։

9 М. М. Асратян, նշվ. աշխ., էջ 50, 58, 69։

10 Գ. Ս. Շախկյան, Արաբական տիրապետության շրջանում հայ ժողովրդի շինարարական գործունեության հարցի շուրջ (Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված հանրապետական V գիտական կոնֆերանս, զեկուցումների թեզեր, Երևան, 1982, էջ 161—162)։

շրջանը) ընդունել որպես վաղմիջնադարյան փուլի շարունակություն՝ համարելով այն վաղ միջնադարի ավարտափուլը[11]։

Զարգացած միջնադարի IX—XI դդ. ընդգրկող առաջին ենթափուլը, ինչպես նկատում է Ստ. Մնացականյանը, նույնպես կարիք ունի վերանայման[12]։ IX դ.—X դ. առաջին կեսն ընդգրկող պատմական շրջանը, որը նախորդել է և հող նախապատրաստել Անիի ճարտարապետության զարգացման համար, իր ճարտարապետական նկարագրով էականորեն տարբեր է և առանձնանում է հետագա ժամանակների ճարտարապետությունից։ Ուստի գիտնականն առաջարկում է զարգացած միջնադարի ընդունված պարբերացման շրջանակներում առանձնացնել IX դ. և X դ. առաջին կեսը, որպես ինքնուրույն շրջան, անվանելով այն մինչանիական[13]։

Մինչև վերջերս զարգացած միջնադար ասելով հասկացվում էր միայն նրա երկրորդ փուլը՝ XII—XIV դդ.։ Նախորդ ենթափուլը անվանվում էր ուղղակի միջնադար, որը շփոթելի էր ընդհանրապես միջնադար լայն հասկացության հետ։ Կամ հաճախ հայ ճարտարապետության զարգացած միջնադարի առաջին ենթափուլը՝ IX—XI դդ., անվանում են Բագրատունյաց շրջան, իսկ երկրորդը՝ XII—XIV դդ., Զաքարյանների շրջան, որը դժվար է արդարացնել, քանի որ ինչպես Բագրատունիները, այնպես էլ Զաքարյանները տիրում էին Հայաստան երկրի միայն մի մասին, մյուս կողմից, Բագրատունիների թագավորության անկումից (1045 թ.) մինչև Զաքարյանների իշխանության հաստատումը (XII դ. վերջ) ընկած է մոտ 150 տարի տևողությամբ մի ժամանակահատված, երբ երկրին տիրում էին սելջուկները։ Հետևաբար, զարգացած միջնադարի ենթափուլերում հայ ժողովրդի շինարարական գործունեության ոլորտները չեն կարող սահմանափակվել Բագրատունիների կամ Զաքարյանների տիրապետության շրջանակներով՝ ո՛չ տիրույթային և ո՛չ էլ ժամանակային առումներով։ Իհարկե, զարգացած միջնադարի փուլում պետք է ներկայացվի Կիլիկյան Հայաստանի (1080—1375 թթ.) ճարտարապետությունը։

Ե. Ուշ միջնադարը միջնադարյան հայ ճարտարապետության վերջին փուլն է, որն ընդունված պարբերացման համաձայն ընդգրկում է XVII—XVIII դդ.։ Որոշ հետազոտողներ ուշ միջնադարի մեջ են ներառում նաև XIX դ., որը չի արդարացվում՝ թե՛ սոցիալ-տնտեսական և թե՛ ճարտարապետական-ոճական միանգամայն տարբեր ուղղվածության պատճառով։ XV—XVI դդ., երբ Հայաստանը վաչկատուն ցեղերի, թուրքական և պարսկական հրոսակախմբերի ավերի ու թալանի թատերաբեմ էր, չեն շրջանառվում հայ ճարտարապետության պատմության պարբերացման մեջ, բացի Մ. Հասրաթյանի հիշված աշխատությունից, որտեղ հայ ճարտարապետության տարեգրությունը փաստորեն դիտարկվում է անընդմեջ՝ սկսած նրա ծագումից ու կազմավորումից մինչև մեր օրերը։ Որ դա արդարացված է և հեռանկարային, երևում է 1912—1913 թթ. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի կողմից Օսմանյան Թուրքիայի կառավարությանը ներկայացված՝ Արևմտյան Հայաստանում գտնվող հայկական եկեղեցիների ու վանքերի ցուցակներից, որոնցում ընդգրկված են նաև XV—XVI դդ. պատկանող մեծ թվով հուշարձաններ[14]։ Այդ դարերին վերաբերող հայկական հուշարձաններ կան նաև այլ

---

11 Ստ. Մնացականյան, Նիկողայոս Մառը և հայկական ճարտարապետությունը, Երևան, 1969, С. Т. Еремян, Опыт периодизации истории Армении эпохи феодализма (Вопросы истории, № 7, 1951, с. 72).

12 Ст. Мнацаканян, Доанийский этап развития армянского зодчества (II международный симпозиум по армянскому искусству, Сборник докладов, т. II, Ереван, 1981, с. 174—179).

13 Նույն տեղում, էջ 179։

14 Ա. Խ. Սաֆրաստյան, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների մինիստրությունն ներկայացված հայկական եկե-

վայրերում (Սևանի ավազան, Սյունիք, Նախիջևան և այլն)։ Նկատենք, որ Թ. Թորամանյանը հայ ճարտարապետության չորրորդ վերածնության շրջանի մեջ է ներառում նաև XV դարը[16] (չնայած այդ դարում ճարտարապետության անհամեմատելի չափերի անկմանը)։ Այս հարցում չի կարելի ուշադրության չառնել նաև այն, ինչ մատնանշում է Գ. Ուլուհոջյանը. «Պատմական Հայաստանի քաղաքներին է նվիրված լինելու Պաոլո Կունեոյի նոր գիրքը, որը հիմնավորապես հերքում է այն թյուր կարծիքը, ըստ որի հայ ճարտարապետության զարգացումն ընդհատվել է 16—19-րդ դարերում։ Սխալ մի տեսակետ, որն էլ հիմք ու պատճառ է դառնում ասելու, թե իբր Օսմանյան Թուրքիայի տարածքում գտնվող այդ ժամանակաշրջանի քաղաքները հայերը չեն կառուցել»[16]։ Իրոք, եթե մի քանի հարյուրամյակների ընթացքում (VIII, IX, XV, XVI) Հայաստանում «քարը քարի վրա» չի դրվել, ինչպես ներկայացվում է մասնագիտական գրականության մեջ, ապա ո՞վ է կառուցել Արևմտյան Հայաստանի կամ այլ վայրերի՝ այդ դարերին պատկանող հայկական հուշարձաններն ու բնակավայրերը։ Մի՞թե այդ սխալ տեսակետը որդեգրելով ժամանակակից թուրք (և ոչ միայն թուրք) պատմաբաններին առիթ ու հիմք չենք տալիս խեղաթյուրելու պատմական իրողությունները։

Զ. Նոր փուլը համապատասխանում է Արևելյան Հայաստանում կապիտալիստական հարաբերությունների հաստատման ժամանակաշրջանին, ընդգրկելով XIX—XX դդ. առաջին երկու տասնամյակները։ Այն բնութագրվում է որպես ռուսական մշակույթի հետ մերձեցման, քաղաքների (Երևան, Ալեքսանդրապոլ, Գորիս, Նոր Բայազետ և այլն) զարգացման, կլասիցիզմի և կանոնավոր հատակագծման սկզբունքների տարածման ժամանակաշրջան։ Եթե միջնադարյան հայ ճարտարապետության նախորդ փուլերում ճարտարապետության դիմագիծը բնորոշող պաշտամունքային ճարտարապետությունն էր, ապա այս շրջանում առաջնային նշանակություն են ստանում քաղաքաշինությունը և ժողովրդական բնակարանի ճարտարապետությունը։

Է. Արդի փուլը խորհրդահայ ճարտարապետության շրջանն է՝ 1920—1990 թթ. ընդգրկումով։ Այս փուլի ձևավորման և զարգացման նախադրյալները կապված են Հայաստանում սոցիալական նոր կարգի առաջադրած պահանջների, տնտեսությունն և մշակույթի ասպարեզներում կատարված տեղաշարժերի հետ։

Հայ ճարտարապետության պատմության պարբերացման խնդրի հետ անմիջականորեն առնչվում են հուշարձանների՝ այդ թվում վանքային համալիրների թվագրումը և ճարտարապետական շրջափուլերի մեջ դրանց ընդգրկումը։ Այն հուշարձանները, որոնց կառուցման վերաբերյալ չկան հավաստի տեղեկություններ, թվագրվում են՝ ելնելով ճարտարապետական-գեղարվեստական հորինվածքային հատկանիշներից։ Եթե մի ժամանակ այդ հատկանշական գծերի կիրառման սահմանները բավականաչափ որոշակի էին, ապա վերջին տասնամյակների հետազոտությունների արդյունքներով դրանք մեծ չափով ընդլայնվեցին, տարածվելով մի կողմից դեպի հայ միջնադարյան ճարտարապետության ակունքները, մյուս կողմից՝ զարգացած միջնադարի փուլերը, նույնիսկ դեպի ուշ միջնադար, ներկայացվելով որպես հնի վերապրուկներ կամ ժառանգորդական դրսևորումներ։ Փաստորեն ճարտարապետական հորինվածքային շատ ձևեր ու գեղարվեստական հատկանշական տարրեր կորցրին իրենց ժամանակագրական երբեմնի կայուն համարված սահմանները, իսկ նորերն էլ ի հայտ չբերվեցին։ Այդ առումով շատ կարևոր է հայ ճարտարապետության տարբեր փուլերին բնորոշ հորինվածքաղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիրները (Էջմիածին, 1965, Ա, Բ-Գ-Դ, 1966, Բ, Գ, Զ, Է, Ը)։

15 Թ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 53։

16 Հայ արվեստին նվիրված միջազգային գիտաժողով, 1985, սեպտեմբեր (Սովետական արվեստ, 1985, № 11, էջ 92—93)։ Հավանաբար XVI—XIX դդ. վրիպում է, պետք է նկատի առնել XV—XVI դդ.։

լին հատկանիշների և առանձնահատկությունների հիմնավոր բացահայտումն ու դասդասումը։

Վանքային համալիրների արժեքավոր հուշարձանները, որոնք կառուցվել են տարբեր շրջափուլերում, անկախ գլխավոր կառույցի հետ ունեցած ժամանակագրական հարաբերությունից, պետք է ներկայացվեն իրենց կառուցման շրջափուլում։ Այդ դեպքում համալիրի կազմավորումը կարող է բաժանվել մի քանի շինարարական փուլերի՝ արտացոլվելով նաև գրաֆիկական նյութերում, ինչ արել է Հ. Խալփաղչյանը Սանահնի վանքային համալիրի կապակցությամբ[17]։ Ասվածը չի վերաբերում հիմնականում արդեն կազմավորված վանական համալիրներին, որոնցում ուշ միջնադարում կառուցվել են արտադրատնտեսական և օժանդակ շինություններ և որոնք համալիրի ժամանակը որոշելիս էական դեր չեն կարող խաղալ, թեպետ առանձին վերցրած պետք է դիտարկվեն որպես ուշմիջնադարյան հայ ճարտարապետության արգասիքներ։

Հայ ճարտարապետության պատմության պարբերացման միասնական համակարգի ստեղծման համար կարևոր է, որ ընդհանրական բնույթի աշխատություններում հայ ճարտարապետությունը ներկայացվի իր ակունքներից մինչև մեր օրերը՝ առանց սահմանափակելու միջանկյալ որևէ փուլով։ Ըստ շրջափուլերի պետք է քննվեն հայ ժողովրդի ճարտարապետական գործունեության բոլոր բնագավառները՝ քաղաքաշինությունը, պաշտամունքային, աշխարհիկ, ինժեներական, ամրաշինական, արտադրական կառույցների, քաղաքային ու ժողովրդական բնակելի տների ճարտարապետությունը, շինարարական տեխնիկան և այլն։

Հայ ճարտարապետությունը խարսխված է տեղական մշակույթի հարուստ ավանդույթների հիմքի վրա։ Դրա հետ միասին նրանում նշանակություն են ունեցել հարևան ժողովուրդների հետ փոխադարձ շփումներն ու ազդեցությունները, որոնք պետք է անհրաժեշտ ուշադրության առնվեն։ Պետականության բացակայության և պատմական ճակատագրի բերումով հայ ժողովուրդը սփռվել է աշխարհով մեկ՝ ստեղծելով իր գաղթօջախները, որոնք բնութագրվում են նրա ստեղծագործական-շինարարական ոգու դրսևորումներով։ Այդ գաղթօջախների ճարտարապետությունը հայ ճարտարապետության արձագանքն է և անբաժանելի մասը, ուստի այն իր արտացոլումը պետք է գտնի հայ ճարտարապետության համընդհանուր պատմության պարբերացման մեջ։

ВОПРОСЫ ПЕРИОДИЗАЦИИ ИСТОРИИ АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЫ

Г. С. ШАХКЯН

Резюме

Периодизация—одна из важнейших задач истории архитектуры, отражение уровня ее развития. Она требует в первую очередь единства хронологических делений, рамок охвата фактического материала, научных наименований периодов и т. д. Учитывая это, целесообразно принять следующие периоды истории армянской архитектуры: *древнейший* (IV—I тыс. до н. э.), *древний* (VI в. до н. э.—III в. н. э.), (*раннее средневековье* (IV в.—80-ые годы IX в.), *развитое средневековье* (конец IX в.—XIV в.), *позднее средневековье* (XV—XVIII вв.), *новый* (XIX в.—1920 г.), *новейший* или *современный* (1920—1990 гг.). К задаче периодизации непосредственно относится датировка монастырских комплексов и отдельных памятников, не имеющих определенных хронологических критериев (летописные, эпиграфические). Для датировки этих памятников важное значение имеет выявление и систематизация композиционных признаков и особенностей разных этапов армянской архитектуры.

[17] О. Х. Халпахчьян, Санаин, М., 1973.